

**Համայնքում պաշտպանված գոտիները ճանաչելու նպատակով կատարվող
ուսումնասիրությունների համար մանրամասն կանոններ սահմանող՝
Հանձնաժողովի 1992 թվականի հուլիսի 30-ի 92/70/ԵՏՀ հրահանգ**

Պաշտոնական տեղեկագիր, L 250, 29.08.1992թ., էջեր 0037 - 0039

Ֆիններեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 44. էջ 0201

Շվեդերեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 44. էջ 0201

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին»
պայմանագիրը,

հաշվի առնելով Հանձնաժողովի 92/10/ԵՏՀ հրահանգով՝ վերջին անգամ
փոփոխված բույսերի կամ բուսական ապրանքների համար վնասակար
օրգանիզմները Համայնք ներկրելուց եւ Համայնքում դրանց տարածելուց
պաշտպանիչ միջոցառումների մասին Խորհրդի՝ 1976 թվականի դեկտեմբերի
21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը եւ, մասնավորապես, դրա 2 (ը)² հոդվածի չորրորդ
ենթապարբերությունը,

քանի որ 77/93/ԵՏՀ հրահանգի դրույթների համաձայն՝ որոշակի բույսի
առողջությանը սպառնացող վտանգների ենթարկվող «պաշտպանված
գոտիները» հնարավոր է որոշել եւ, հետեւաբար, կարելի է ապահովել ներքին
շուկայի հետ համատեղելի համապատասխան հատուկ պաշտպանություն,

ավելին, քանի որ անդամ պետությունները կարող են մասնավորապես
պահանջել որպես պաշտպանված գոտի ճանաչել այն գոտին, որտեղ
Հրահանգում նշված մեկ կամ մի քանի վնասատու օրգանիզմները, որոնք
առկա են Համայնքի մեկ կամ մի քանի հատվածներում, էնդեմիկ կամ

¹ ՊՏ թիվ L 70, 17. 03. 1992թ., էջ 27:

² ՊՏ, թիվ L 26, 31. 01. 1977թ., էջ 20:

տարածված չեն՝ անկախ նրանից, որ այնտեղ նրանց տարածվելու համար առկա են նպաստավոր բոլոր պայմանները,

քանի որ, երկրորդ դեպքում պաշտպանված գոտու ճանաչումը, այնուամենայնիվ, պետք է հիմնվի այն հանգամանքի վրա, որ համապատասխան ուսումնասիրությունների արդյունքները հակառակն ապացուցող փաստեր չեն պարունակում,

քանի որ նման ուսումնասիրությունների մանրամասների մասին ընդհանուր ընդունված կանոնների բացակայության դեպքում այս մանրամասն տվյալները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով արդյունավետ գիտական եւ վիճակագրական սկզբունքները,

քանի որ անհրաժեշտ է ստեղծել Համայնքի ընդհանուր պայմաններ՝ ներառյալ կենդանական աշխարհի վնասակար օրգանիզմների՝ մասնավորապես հիմնականում բացօթյա տարածքում աճող մշակաբույսերը վնասող միջատների ու տիզերի առումով ուսումնասիրությունների սկզբնական փուլի ուղեցույցներ, եւ նախատեսել այլ վնասակար օրգանիզմների առումով հավելյալ ուղեցույցների ավելացում հետագայում, երբ առկա լինեն տեխնիկական տեղեկությունները,

քանի որ պաշտպանված գոտու ճանաչումը պահանջելիս անդամ պետությունները պետք է բավարարեն այս պայմանները,

եւ քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պաշտպանված գոտու ճանաչումը պահանջելիս բավարարվեն 2-րդ պարբերությամբ սահմանված պայմանները, ինչպես նշված է 77/93/ԵՏՀ հրահանգի 2 (1) (ը) հոդվածի առաջին ենթապարբերության առաջին պարբերությամբ:

2. Առաջին պարբերության նպատակով՝ բավարարվում են հետեւյալ պայմանները՝

ա) սահմանվում է գործողությունների պաշտոնական ծրագիր, որի նպատակը հաստատելն է, որ տվյալ Հրահանգում նշված այն վնասակար օրգանիզմները, որոնց առումով տվյալ գոտին պետք է ճանաչվի պաշտպանված գոտի, էնդեմիկ կամ հաստատված չեն այդ գոտում,

բ) (ա) կետում նշված ծրագիրը դիտանցվում է այն անձանց կողմից, որոնք անդամ պետությունում որպես «պատասխանատու պաշտոնատար մարմիններ» գործելու իրավունք ունեն, ինչպես նշված է Հրահանգում:

3. 2 (ա) պարբերությունում նշված ծրագիրն ընդգրկում է՝

–ուսումնասիրություն, որը հիմնված է խնդրահարույց վնասակար օրգանիզմների կենսաբանության եւ համապատասխան գոտու ագրոնոմիայի ու միջավայրի ըմբռնման վրա՝ համապատասխան հետազոտման մեթոդների՝ ներառյալ աճի միջավայրի ու մշակաբույսերի ստուգումը եւ, անհրաժեշտության դեպքում, նաեւ լաբորատոր փորձարկումը կիրառելու միջոցով,

–մշտական այնպիսի համակարգ, որով ապահովվում են կանոնավոր եւ համակարգված ուսումնասիրությունները, պատշաճ ժամկետներում, տարին առնվազն մեկ անգամ, այն վնասակար օրգանիզմի (օրգանիզմների) առկայությամբ, որոնց առումով տվյալ գոտին պետք է ճանաչվի որպես պաշտպանված գոտի,

–ուսումնասիրությունների արդյունքների մասին տվյալների վարման համակարգ.

բ) (ա) կետում նշված ուսումնասիրություններն իրականացվում են այն անձանց կողմից, որոնք անդամ պետությունում որպես պատասխանատու պաշտոնատար մարմիններ գործելու իրավունք ունեն, ինչպես նշված է Հրահանգում. ավելին, այս անձինք բոլոր համապատասխան հիմքերից օգտվելու եւ տվյալ գոտում բույսերի, բուսական ապրանքների կամ աճի միջավայրի նմուշներ պատրաստելու իրավունք ունեն : Նրանք նաեւ պետք է ունենան ուսումնասիրությունների առումով համապատասխան գործառույթներ կատարելու համար անհրաժեշտ որակավորումներ.

գ) ուսումնասիրության մեթոդաբանությունը, ուսումնասիրությունների իրականացումն ու արդյունքները հասանելի են Հրահանգի 19 (ա) հոդվածում նշված փորձագետների համար.

դ) Հանձնաժողովին ծանուցվում է ուսումնասիրության մեթոդաբանության եւ իրականացման մասին: Հանձնաժողովն այս տեղեկությունները հաղորդում է մյուս անդամ պետություններին.

4. 3 (ա) պարբերությունում նշված ուսումնասիրություններն անցկացնելիս, անդամ պետությունները անտառային բույսերին կամ բուսական ապրանքներին առնչվող նեմատոդներից (կլոր որդերից) բացի, կենդանական աշխարհի այլ՝ հիմնականում բացօթյա միջավայրում աճող մշակաբույսերին վնասող վնասակար օրգանիզմների դեպքում, հաշվի են առնում հետեւյալ ուղեցույցները՝

ա) ուսումնասիրությունը կատարվում է համապատասխան գոտում,

բ) ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնվում է հաշվարկային փորձահողամասի մասով գրառումներ կատարելու մեթոդի վրա, որն ընդգրկում է հետեւյալ բաղադրիչները՝ ստեղծվում է դիտակետերի ցանց համապատասխան գոտին ամբողջությամբ ընդգրկող համակարգված ցանցի հիման վրա: Յուրաքանչյուր դիտակետի համար գրի են առնվում հետեւյալ պարամետրերը՝ համարը, լայնության եւ երկարության փաստացի կոորդինատները, տեղագրությունը եւ, անհրաժեշտության դեպքում, տրվում է տեղանքի նկարագրությունը:

Անդամ պետություններն անհրաժեշտության դեպքում հավաքում են հավելյալ տեղեկություններ: Դիտակետերը կարող են նշագրվել, դիտակետերը ցույց տալու նպատակով կարող են կազմվել քարտեզներ.

գ) դիտակետի պիտանիությունը որոշելու համար օգտագործվում են հետեւյալ չափորոշիչները՝

դիտակետը շրջապատող տարածքը պետք է բավականին մեծ լինի, որպեսզի հնարավորություն տրվի ընտրելու համապատասխան դիտակետ.

–ընդհանուր առմամբ, դիտակետը պետք է տեղակայված լինի վերոնշյալ տարածքում՝ գնահատման համար անհրաժեշտ համապատասխան գործառույթներն իրականացնելու նպատակով.

–հատուկ դեպքերում, ըստ անհրաժեշտության, կարող են ընտրվել նաեւ այլ դիտակետեր, օրինակ՝ այն վայրերում, որտեղ խնդրահարույց վնասակար օրգանիզմի (օրգանիզմների) հավանական առաջացման վտանգը մեծ է.

դ) անհրաժեշտության դեպքում մեթոդաբանական տվյալները՝ հատկապես տեղումների եւ ջերմաստիճանի ու հողի մասին տվյալները, պետք է գրի առնվեն, նախընտրելի է դիտակետի տեղանքում, սակայն դրանք կարող են վերցվել նաեւ մոտակա դիտակայանից, որտեղ տվյալ փոփոխությունները պարբերաբար չափվում են: Էքստրեմալ երեւոյթները (օրինակ՝ երաշտ, տեղատարափ անձրեւ եւ այլն), որոնք կարող են ազդել դիտարկումների վրա, նույնպես պետք է գրի առնվեն.

ե) յուրաքանչյուր դիտակետում ուսումնասիրությունը պետք է առնվազն՝

–կենտրոնացված լինի բույսերի եւ բուսական ապրանքների որոշակի ներկայացուցչական թվի վրա.

–կենտրոնացված լինի վնասակար օրգանիզմին (օրգանիզմներին) հյուրընկալող մեկ կամ մի քանի հիմնական բույսերի կամ բուսական ապրանքների վրա. անհրաժեշտության դեպքում ընդգրկվում են նաեւ այլ հյուրընկալող բույսեր,

–ընդգրկի՝

–խնդրահարույց վնասակար օրգանիզմի (օրգանիզմների) ախտանշանների կամ նշանների առկայությունը որոշելու համար արտաքին զննում, որը պետք է անցկացվի այն ժամանակ, երբ ակնկալվում է, որ նման ախտանշանները կամ նշանները կհասնեն իրենց առավելագույն մակարդակին.

–կասկած առաջանալու դեպքում, նմուշների լաբորատոր փորձարկում.

զ) անհրաժեշտության դեպքում, դիտակետերում օգտագործվում են թակարդներ, որոնք կարող են գրավել համապատասխան օրգանիզմին. օգտագործման ենթակա թակարդների տեսակը եւ թիվը, ինչպես նաեւ դրանց

օգտագործման մեթոդը որոշվում է՝ հաշվի առնելով վնասատուի կենսաբանությունը:

5. Կարող է ձեռնարկվել ցանկացած հավելյալ միջոց, որն անհրաժեշտ է ապահովելու համար, որ 2-րդ պարբերության մեջ սահմանված պայմանները բավարարվում են:

6. 4-րդ պարբերության ուղեցույցներին անհրաժեշտ է կատարել լրացումներ՝ դրանց մեջ նշված վնասակար օրգանիզմներից բացի նաեւ այլ օրգանիզմների առումով՝ վերջիններիս վերաբերյալ տեխնիկական անհրաժեշտ տեղեկությունները տրամադրվելուն պես:

Հոդված 2

1. Անդամ պետություններն ուժի մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթներն ամենաուշը 77/93/ԵՏՀ հրահանգի I –V հավելվածները վերանայելուց վեց ամիս հետո: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2.

Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են ներպետական իրավունքի բոլոր այն դրույթների մասին, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 3

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: Կատարված է Բրյուսելում, 1992 թվականի հուլիսի 30-ին: Հանձնաժողովի կողմից՝

Ռեյ ՄԱԿ ՇԱՐԻ

Հանձնաժողովի անդամ